# ՎԱՆ–ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

# 1. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ

Կէլնի, չէլնի մեկ թակավոր, մեկ կնիկ, մեկ տղա: Էն տղեն ինգյրներուց խետ կուտի, կխմի, կֆռա:

Մեկ օր ինգյրներաց խետ կէրթա, խորոտ մեշիմ մեչ կնստեն, կուտեն, կխմեն, քեֆ կանեն, խինգյ վեց օր:

Էտ տղի խեր թակավոր ի զաթի, կմեռնի:

Ինգյրներ կուտեն, կխմեն, էտ տղին կթողնեն էտ մեշի մեչ, կուգյան ուրենց տներ: Տղեն կմնա էտատեղ սարխոշ հալի մեչ, քյնուկ:

Ուր պարեկըմներ կէրթան կասեն. - Խերդ մեռեր ի, արէ, էրթանքյ էլի թակավոր:

Կասի. - Չե՛մ իգյա, քյանի՝ որ իմ ինգյրներ զի թողիցին իսատեղ, կնացին, ես էլ չեմ իգյա:

Պարեկըմներ ինչ կանեն, տղեն չէրթա, կէրթա̈ն քյա̈ղաքյ ուրիշ մարթ կանեն թակավոր:

Տղեն, որ խելքյ կուգյա̈ վերեն, թռնի կուգյա̈ տուն: Մոր կասի. - Մարե՛, իմ խեր մեռավ, ամա մկա տյհւ ես մնացե, զիկ փա̈րա̈ տու, տանեմ ուտեմ:

Տղի մեր ինչ կանդա̈ր, որ փա̈րա̈ ուներ, իտուր տղին, տղեն տարավ, կէրավ, տրորեց:

Էրբ որ փա̈րեն խլսավ, տղեն էլ փա̈րա̈ չմնաց, որ ուտեն, իրենց քեռշկ սարեն էլ ծախիցին, կերան: Ծարահատյալ կնա̈ցին պատիկ տունըմ պըռնիցին, նստան էնտեղ: Տղեն կնա̈ց տավէրկու-տավիրեք տարեկան տղեմ պռնեց պիրեց իտիր մոր կուշտ, ասաց. - Մարե՛, ահա իսա տղեն քյե թող խաց պիրի, ճյուր պիրի, չարշիից սոխ պա̈ն պիրի, վեր քյե տա̈ռնա̈, ես կէրթա̈մ ուրուշ երկիր, կուրբա̈թութեն:

Տղեն էլա̈վ ուր պատրաստութեն տեսավ, ինգյա̈վ ճա̈մբա̈խ կնա̈ց, իրեք ավուր ճա̈մբա̈խ կնա̈ց, տեսավ էնտեհեն բա̈զըրգյա̈նիմ քյարվան էկավ:

Բա̈զըրգյա̈նի մարթեր ծարավ ին, տղին ասին. - Իճի խոր, մե խամար ճուր խան, մենք խմենքյ:

Տղին էճուցին խոր, ճյուր իխան ինոնք խման, տղին թողին խորի մեչ, կնացին: Տղեն մնաց խորի մեչ, էրկու գյհրտերաց խետ: Գյհրտեր մեկ սև կէլնի, մեկն էլ կարմիր կէլնի, մեկ-մեկ շարշափ կթա̈լեն գյլխներ, կուգյա̈ն տուտուզ կնստեն տղի կուշտ:

Կարմիր գյո̈րտ տղին կասի. - Ե՞ս եմ խորոտ, թե իսա սև գյո̈րտ:

Տղեն կասի. - Տյուն էլ խորոտ ես, էն էլ խորոտ ի:

Էն կյա̈նխ որ իսասկնա ասաց, կարմիր գյո̈րտ կպատռի, կարմիր գյո̈րտ որ կպատռի, տղեն սնդկի վերեն նստուկ, կէլնի խորի պերան, կտիսնա էնտեհեն ուրենց մա̈հլի քյրա̈ջին էն թա̈րա̈ֆեն կուգյա̈:

Տղեն կասի. - Ի՞նչ տամ, իսա սնդուկ տանես իմ մոր թավլիմ անես:

Քյրա̈ջին կասի. - Ի՞նչ որ կուտաս:

Տղեն խանեց ջեռբից մեկ մաջիթեա իտուր քյրա̈ջուն: Քյրաջին առեց սնդ՞ւկ, իպե, իտուր տղու մոր:

Մեր մեկ օրից սորա, կասի՝ մեկ խատ պանամ տեսնամ իմ լաճ զիկ ի՞նչ ի ճամխե:

Կպանա կտիսնա, որ մեկ խատ խուռնիկ խրեղեն ախչիկըմ: Սնդկի մեչն էլ ախչկան ջհեզն էլ ակնունք կէլնի:

Ուրինց տան տիմա̈ց խանի տեղըմ կա: Էն օրն էլ էտա տեղ խանիր են մա̈զաթ, որ պիտի ծախվի: Էտա կնիկ կուտա մե խատ ակնունքյ էտա տավիրեք տարեկան տղին, կասի. - Տա՛ր չարշին սարաֆնոց, խուրտա արա պե:

Տղեն կտանի կխուրտի, մեկ այբա ոսկին կառնի, կուգյա տուն:

Էտա խուռնիկ խրեղեն խարս խալի տեղաց փեշ կզարնի, իզարկ արաց ութ խարիր ոսկի առեց: Անիդա քասն խատ մա̈հա̈նդիզ իպե կայնըցուցեն մեկ ճի̈չ քոշկ ու սարե մը: Խուռնիկ խրեղեն ախչիկ կեսուրն ու էտ ծառան ուրենց քեռղիկից կքյաշվեն էտ սարայի մեչ, ուրախ կնստեն:

Էտ կնիկ որ կէլնի, էտա քեռշկ սարի աթրաֆ կփոփոա, շառավիոք կզարնի թակավորի քեռշկ սարեն: Էտ թակավոր տիսնալով, մայիլ կէլնի, կխիվինդնա կպառկի կսկծու:

Մա̈հլի մարթեր, էտ խարս որ կտիսնան, կէրթան կասեն, էն խարս որ կա՝ թակավորուն լայեղ ի:

Թակավոր շատ մարթեր, շատ զեորք զինա̈թ կորոխկի, խարսին կասի. - Արե՛, զիկ առ:

Կասի. - Անկարելի ի քեզի առնել, զիկ տեր կա:

Թակավոր կիտի զաթի, թե էտ խարսի տեր վով ի, որ քյաղաքյն ի, նամակ վեր նամակի կորոխկի, կասի. »Քյո կնիկ տան մեկ տոնեն մարթեր կմտուցի, էն մեկել տոնեն տուրս կխանի, օռոսպի ի տարցե, քյո կնիկ«:

Տղեն որ կլսի, կէլնի ճա̈մբախ, որ գյա ուր տուն:

Կնիկ կէլնի յոթ ճորապեռ ապրանքյ իլին, կորոխկի ի՞կան տիմաց, որ իրկան խետ առնեն կյան տուն, չէլնի ասեն թե էտ տղեն պան չունի, սա̈ռսակ էկավ:

Տղեն էկավ քյա̈ղքյի պերան, ճորապեռներաց խետ, առոք-փառոք կուգյա̈, կմտնի տուն:

Տղեն մեկ օր ուր կնգյան խետ, խա̈բա̈ր չիտա: Իրիկուն կէլնեն յաթաղ կթա̈լեն պառկելու: Տղեն կպառկի, ամա կնգյա̈ն հիչ չասե, արե պառկի: Կնիյն էլ ծեռ սրտին կայներ ի: Տղեն յաթղից վեր կէլնի, կյա̈մեն կառնի, կնգա̈ն կպրտի, փենջարից կթա̈լի տակ:

Թակավոր խիվանդ էր, մեկ խատ խեքիմ կյա̈դիմ կէրթա̈ վեր թակավորին, կուգյա̈: Թակավորու մոտ էրթա̈ցած միչոցին, խեքիմ կտիսնա պատի տակ ծվոց մը կուգա̈: Կմոտախասնա, կտիսնա, որ խուռնիկ խրեղեն ախչիկ: Ջեռով նաֆաս կուտա, կառնի խեքիմ կվերուցի, կառնի ուր տուն: Տեղ-տա̈րման կանի, կժրցուցի, ամիսից սորա ախչիկ կժրի, խեքիմ կասի. - Իլլահ զիկ պիտի առնես:

Ախչիկն կասի. - Անկարելի ի, ես քյե չեմ առնե:

Խեքիմ կէրթն թակավորի մոտ. տեղ անելու, էտ կնիկ ճամզըմ կկընդնի զինք կմտնի ծեփուկ սնդկի մեչ: Համալին կասի.«Զիկ կտանե՞ս, կտնես ծովու պոուկ. ծեռնով օխթի մլկի էրթա ծով»:

Համալն առեց խինցյ ոսկին, շլկեց սնդյուկ տարավ ախչկան ասածին պես թնլից ծով: Սնդյուկ մեկ արտաքոյ զատացավ ծով, էն թնրնփեն գյնմիմ էկավ: Գյնմու մեչի մարթերն առին. - Իսա սնդյուկ խանենքյ տանենքյ գյնմին:

Առիցին տրիցին գյնմին, ասին. - Պննննքյ, խենքյ ի՞նչ կ‧ա մեչ:

Կպննննն, կտիսնան խոտնիկ խրեղեն ախչիկըմ, անիտա կկոծեն էլլոմ: Կասեն. - Տանենքյ իսա մեր թակավորուն լայեղ ի:

Կպիրեն սնդյուկ կուտան թակավորուն: Թակավոր կպանա սնդյուկ, կտիսնա, որ ուր ուզած ախչիկ էկավ ինցյավ ուր ծեռ: Թակավոր ախչիկն տիսնալուն պես անիտա կլավնա: Կասի. «Ցոթն օր, յոթ կիշեր խարսնիս պիտի անեմ»:

Էտ թակավորին զաթի եոսունին խատ կնիկ կա: Էտա սնդկի մեչի ախչիկն անիտա քախտնիք քառասուն ծեռք մարթու խսզավ կոտա թարզիներ կարելու մեկ ավուր մեչ պոծնել: Խազավներ պիրիցին, տվին էտ ախչկան, էտ ախչիկն էլ թակավորու եոսունին կնգնն էլ ննոնճուց ճամոզեր էր, քառսուն էլ խալվներ կխսգյնին, զաթի թակավորուն ծիեր՝ շատ, քառսուն ծի կխեծնեն, ինցան ճննմբնխ, տեպի Պարսկաստան: Կննցին խասան կես ճննմբնխ, տեսան քյեոշկ սարեմ: Մտան ներս, տեսան, որ էստեղ քառսուն խատ դև նստեր են, մե մեկ-մեկ օդի մեչ են: Կիյթեր ֆնսեր առիցին տակ, տնոցան մե մե մեկ ախչիկ, ամեն մեկ ախչիկ մեկ դև սպիցին, նստան խացկերութի, լցին վիրն, վիրն գյինիք, տվիցին դևերաց, սնրխոշցուցին և ամենի վզներ, ինչխ որ էտ ախչիկ ննոնճուց սովրցուց էր, կտրիցին: Դևերաց վզներ կտրիցին պոծան, ուրենց ճննմբնխ շարունակեցին, կնացին խասան Պարսկաստան:

Էտասեղաց թակավոր զաթի մեռած ի: Էտ քյնդքյի մեծամեծներ կելնեն տնշտ որ դոլվնթ կուշի պիտի թնլեն, վեր կյլխու վերեն որ նստի՝ էն կանեն թակավոր: Էտ ախչիկ ուր մարթերով, եոսունին թակավորի կին ախչիկներով, իտոնք ան էլ կէրթնն տնշտ:

Դովլաթ կուշին թնլիցին, կննց նստավ էտա խրեղեն ախչկա կյլխու վերեն: Էտ քյաղքյի մարթեր ասիցին. - Էսա ուրիշ երկրացի է, էսա պիտի չլնի թակավոր, - զատացուցին էտ բազմության մեչէն:

Դովլնթ կուշին էլ մել թնլիցին, կննց ֆռաց, ֆռաց էլ մել նստավ էտա ախչկա կյլխու վերեն. ամա քյնդքյի մարթեր չեն կիտե, թե էտա ախչիկ ի:

Թակավորի մարթեր ասին. - Էլ մի չլնի. մեկ էլ պիտի թալենք, որ էլ մել ինոր կյլխու վերեն նստի, զաթի էն ի մեր թակավոր:

Դովլնթ կուշին թնլիցին, կննց էլ մել նստավ էտ ախչկա կյլխու վերեն:

Պիրիցին էտ ախչիկ արիցին թակավոր, նստըցուցին թախթի վերեն:

Ախչիկ թող մնա ուր տեղ, մենք տառնանքյ վեր տղին:

Էտա տղեն, որ ուր կնգան մոթիր էր, կույն կմրմռա, ծեռ ճար չկա:

Էն թակավորն, որ խիվանդ էր, ուր քառսուն կիյթեր որ փախիր ին, էլավ թնրկի դյունյա արավ, ասաց.»Էրթամ էտ ախչկա սուրնթ տիսնամ, նոր թող մեռնեմ«

Էն էլ ինկնվ քյնդքյե քյնդաքյ՝ ախչիկ փնտրել:

Գյննք խեքյմուն: Խեքյիմ ասաց. «Էրթամ էն ախչկան սուրնթ մեկ էլ տիսնամ, նոր թող աստված իմ խոգյին առնի»:

Էտ մեր ծառան ասաց. «Զիկ լազըմ չի էսա երկիր մնալ, էրթամ ուրիշ երկիրներ, ֆռամ, իմ խաթունի սուրաթից մեյ խատ տեսնամ, նորեն թող մեռնեմ»:

Էտ խաթրսի իրիկն էլ ասաց. «Ես էլ կէրթամ, աշխարհէ աշխար, երկրէ երկիր կպտտեմ, իմ կնգյան սուրաթից տեսնամ, նորեն առոլած իմ խոգյին տանի»:

Էտոնքյան զաթի ինքյնն ըյնդըյներ պտտել, որ իտոր սուրաթ տեսնան, նոր մեռնեն:

Մենք թողնենք, էրթանք Պարսկաստան: Էն խրեղեն ախչիկ, որ նստեր ի թակավոր, շեմից մեկ ջրատ խորոտ ախպյուրըմ՝ վերեն մնրմնրից կամար, ուր սուրաթ քյաշել տվից ճոչ թղթի վերեն, կպուց էտ կամարի վերեն: Էրկու խատ պախտապան կայնըցուց էտ ախպըրի վերեն, պատվիրեց, որ էստտեղ վով որ կուգյն ճյուր կխմի, որ «ա՜խ» կքյաշի պռնեք, պիրեք իմ մոտ:

Էն խիվանդ թակավոր կննց էտ ախպըրին ոտտո էկավ, ճյուր խմավ, սուրաթ որ տեսավ ա՜խըմ քյաշեց, պախտապահներ պռնիցին տարան թակավորին:

Թակավոր հրաման արաց, ասաց. - Տարեք իտոր, տրեք ցուրտ օղեմ:

Խեքյիմ էկավ էտ ախպըրին ոտտո էկավ, ճյուր խմավ, սուրաթ տեսավ «ա՜խ, վա՜խ» արաց: Էլմը պախտապահներ պռնիցին տարան:

Թակավորն ասաց. - Տարեք իտոր, պնդղնիս լոխկցուցեք, լավ խալավ խագցուցեք, խորոտ օղի մը մեչ տրեք, լավ կերկուր պնն տվեք, թող ուտի:

Էտա ախչկան տավիրեք տարեկան ծառա տղեն կննց ախպյուր ճյուր խմավ, էն էլ «ա՜խ» քաշեց: Պախտապահներ պռնիցին, տարան թակավորին:

Թակավորն ասաց. - Իտորն էլ լոխկցուցեք, լավ խալավ խագցուցեք, տրեք տաք օղե մը:

Մնաց իրիկ: Իրիկն էլ կննց կընտնվ էտ ախպյուր, ճյուր խմավ, տեսավ ուր կնգյան սուրաթ, որ ա՜խ քյաշեց, բըլկ՝ արուն պերնեն իթնլ: Պախտապահներ իտորն էլ պռնիցին տարան թակավորի մոտ:

Ասիցին. - Թակավոր ապրած կենա, էն մեկելներ ախ արիցին, իտոր պես չէ, էսա մարթ որ ախ քյաշեց, պերնեն բըլկ արուն իթնլ:

Թակավորն ասաց. - Տարեք լոխկցուցեք պնդղնիսի մեչ, ոսկի շորեր խագցուցեք, տարեք լավ օղի մեչ նստըցուցեք:

Թակավոր հրաման արաց, որ ինչ կնճղնոր որ վնգիր, սնդրնգնմ կա, ուր սարեն գյնն: Վնգիրներ էկան, սարեն պիլոր-պիլոր նստան: Կանչեց ուր իրիկ, էտա տղեն, էտ թակավոր, խեքյիմ:

Կնիկ զաթի հմենին էլ կճանչնա, ուր իրկան կասր. - Լա՛վ ականչ արա, ես քննություն կանեմ:

Կանչեց թակավորին, ասաց. - Տյու ինչի՞ «ա՜խ» արիցիր:

Էն խիվանդ թակավորն ասաց. - Գննըչիկ, մեկ ախչիկ մեչ ծովուն կընտնն, պիրիցին, ես յոթն օր, յոթ կիշեր խարսնիս պիտի անի, նոր պսակվի էտ ախչկա վերեն, զիկ եոսունին կնիկ կեր, էտ ախչիկ առեց իտըննք փախան, մեննք իսկի չակխանք:

Թակավորն կասի. - Տյու իսկի էտ ախչկան մոտոխասցա՞ր, դողրին սաս, թե չէ քյո գլոխ գննրնել կուտամ:

Թակավորն ասաց. - Չէ՛, չէ՛ իսկի պնն չեմ արե, մեկ տիր տեսա, իտոր սուրաթ:

- Է՜ն, - կասի, - տյու կայնի էսոս տեղ:

Խեքյմուն կայնըցուց, խարցուց. - Տյու ինչի՞ «ա՜խ» արիցիր:

Խեքյիմն ասաց. - Ընցմելն ինքյաւն կիշեր էր, տեսա, որ նվոց կուգյան պատի տկից, մոտոխասցա տեսա ախչիկ ըմ, վերուցի տկից, վերուցի տարա իմ տուն. մեկ ամիս տեղ տյուր արի, ծրցուցի. ասիցի՝ զիկ առ, ասաց՝ կարելի չի, որ առնեմ: Էլավ տնեն փախավ կնաց, էլ կիտցա դ՞ր կնաց, էնոր խամար էլա էկա. սուրմաթ տեսա ա՞խ քյաշեցի:

Թակավորն ասաց, թե. - Տյ՞ւ իտոր ճիչ չմոտոխասցա՞ր:

Աւսց. - Չէ՛. ինչպես իմ մեր, իմ քյոր: Հեչ պանըմ չեմ արե:

Ծառա տղին կկանչի կասի. - Տյ՞ւ ինչի՞ «ա՛խ» արիցիր:

Տղեն ասաց. - Ժամանակին թակւվորի տղեն զիկ տարավ ուր մոր մոտ, զիկ արաց ծառա, քյանիմ տարի մնաց, իմ աղեն կնաց կուրբաթ երկիր, ինոր կնիկ անդկով օրոխկեց էկավ մեր տուն: Իմ ճոչ խաթուն անդուկն իպան: Իմ պստիկ խաթուն մեչ անղըկին, խանիցինք տուրս, խոջա էր քոշկ սարա շինիցինքյ: Մեկ էրկու տարի սորա իմ աղեն էկավ: Կիշեր իմ պստիկ խաթունին՝ ուր կնգան սպանեց, ինոր խամար ասի՝ էրթամ մեկ էլ տեսնամ իմ խաթունի սուրաթ, նոր թող մեռնեմ. էկա ախպըրի վերեն. իմ խաթունի սուրաթ տեսա «ա՛խ» արիցի:

Թակավոր ուր իրկան կխառցուցի, կասի. - Տյ՞ւ ինչի՞ «ա՛խ» արիցիր. որ պերնետ արուն իթալ:

Իրիկն ասաց. - Էսա մարթ որ կա, մեր երկիր թակավոր էր, ես կնացեր ի կուրբաթ երկիր, իմ կնիկ մնացեր էր իմ մոր մոտ, էս թակավոր սութ նամակներ գյրեց զիկ, ասաց. «Քյո կնիկ աղմաբըղզի տարցե. էսասկընա մարթեր կպիրի, կտանի, ինոր խամար ես կուրբաթությունից տառցա ետ, էկա տուն իմ ամֆքարից զարկիցի իմ կնիկ սպանիցի, առանց խետ խաբար տալու: Ինորից սորա, էլա ինգա երկրե երկիր, ասի՝ ինոր սուրաթ տիսնամ, նոր թող մեռնեմ, ինոր խամար որ իմ կնգա սուրաթ տիսա «ա՛խ» արի, ինոր խամար իմ պերնեն արուն իթալ:

Թակավորն ուր իրկան ասաց. - Տեսա՞ր, որ քյո կնիկ անարատ կույս ի մնացե, ոչ մեկին յախա չի տվե:

Թակավորն ուր թաքյ ուր կյլխոց կառնի տակ, կտնի ուր իրկան կյլ՞խ. կասի. - Ես էն ախչիկն եմ, որ տյ՞ւ վնասիցիր. փեշյարից թալիցիր տակ, մկա տյ՞ւ թակավոր, ես՝ քյո կնիկ:

Անիտա կհրամայեն, որ էմեկել թակւվորի վիզ զարնեն:

Ծառան. պզտիկ տղեն էլ կուրախնա, ուր աղեն ու խաթյուն կկըռնտնի, կմնա ինոնց մոտ:

Թակավոր խեքյմուն կանի սադրազամ կտնի խետ ուր կշտին:

Էն թակավորի եոսունին կնիկ-ախչիկն էլ կուտա մե մեկ ուրենց ուզած երիտասարթ վանզիրներաց:

Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, յոթ տեսակ չալկիներ կպիրեն, կզանեն, կխաղան. քեֆ ուրախություն կանեն, թակավորն ու թակուհին կպսակեն:

Ինոնքյ խասան ուրենց մուրադին, մենք էլ՝ մեր մուրադին:

Աստծուց իրեքյ խնձոր էնավ. մեկ՝ ասողին. մեկ՝ գյրողին, մեկ էլ ականջ արողին: